

պէս նաեւ Հայազն օրիորդաց ի նոյն գպրոց փոխադրուելոյն աւետիսը հազորդելոյ բարեբազդութիւնը կունենամք հանդերձ շնորհակալութեամբք մեր եւ ժողովրդեան:

### Մ Ե Տ Ի Կ .

Ի Տիմիս հրատարակեալ Մէջ-լրագրի 16. ըդթուոյն մէջ Աստրախանում կատարուած մի հանդէսը նկարագրելով՝ նամակադիրն կյիշէ ժողովրդեան վերայ հանդիսապետ Եպիսկոպոսին մի տեսակ Մշիկ կոչուած գործիքով զուշ սրբիւր եւ կհարցանէ՝ եթէ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ այնպիսի մի սովորութիւն կայ:

Ուստի պարոք կհամարիմք մեզ պատասխանել, զի Հայաստանեայց Եկեղեցին երեւէ այնպիսէ պամ օրհնած զուշ սրբիւր սուլու-նիւն լունի, հետեւաբար կդժուարանամք հաւատալ՝ որ Գեր. Դէորդ Արքեպիսկոպոս Վեհապետեանց լւր վիճակին մէջ՝ ուր ուրեք եւ իցէ՝ թոյլառութիւն տռաւած լինի այնպիսի օտար եւ նոր սովորութեան, միանդամայն եթէ ստոյգ է հրատարակուածը՝ երբէք չեմք յուսար որ միւսանդամ կրկնել ներէ:

### ՏԱՐՈՒԻՆԱԿ ԳԻՍՍԱԼՈՐՆԵՐ .

Փետրուար ամսոյ Արարատին մէջ Թէպէտեւ ընդհանուր տեսութիւն մի ըրած էինք հայկական հոգեւոր ծխական Դպրոցաց արդի եւ ապահայ վիճակին վրայ, բացատրելով նոցա ունենալիք յարաբերութիւն-

ները ի առիպիլ հարկին տէրութեան ուսումնական վարչութեան նետ, բայց արդ հարկաւոր դասուեցաւ մասնաւորել մեր տեսութիւնը հայազգի Դպրոցաց ներքին կառավարութեան նկատմամբ՝ ցաւօք սրտի նկատելով՝ որ քանի մի տեղեր, ինչպէս նաեւ Սիմֆերովոլ քաղաքին մէջ ի Տաւրիթեան Թերակղզին, անհնուատեան ու հակագային խլսումն կայ քանի մի օտարուսումն եւ հակառակասէր ազգային անհատներու կողմանէ՝ մեր ազգի Շայրադոյն Հոգեւոր Խշանութենէ անկախ ու անհամամիտ գործառնութեանց տեղի տալով՝ յանգոյշաւ սերմանել միամիտ ժողովրդեան մէջ այն երկարառակութիւնն ու անմիաբանութիւնը, որ փոխանակ յառաջադիմութեան, ինչպէս ի փորձոյ ստուգուած Է՝ յետախաղաց արդիւնքներ կարտարերէ հանդերձ այլովք բազմապատիկ ցաւալի հետեւամօք:

Քոչ յայտնի է մեր ազգի սկզբնական ու հանրակրթական Դպրոցաց հոգաբարձութեանց, որ ըստ նորոգ տնօրէնութեան Ազգասէր եւ Սրբազնադոյն Հայրապետի ամենայն Հայոց՝ իւրաքանչյւր վիճակաց մէջ հաստատուած են Թեմական տեսուժներ եւ տեղ տեղ նոցա օգնականներ, որոց ի լրանալ տարեկան ուսումնական շրջանին՝ անշուշտ պիտի արուին իւրաքանչյւր հոգաբարձութեանց կողմանէ օրինաւոր եւ բարեկարգ ցուցակ նոցա հակողութեան ներքոյ գտնուող դպրոցաց տնտեսական եւ ուսումնական վիճակին վերայօք: Եւ որովհետեւ այդ ցուցակները ամենայն տարի Թեմական տեսչաց կողմանէ պիտի առաջարկուին նաեւ Ս. Ա. Թոռոյ Ճեմարանի նկատողութեան եւ այդ ցուցակներէն կարելի պիտի լինի Եղրակացնել մեր Դպրոցաց յառաջադիմութիւնը կամ յետանացութիւնը նաեւ ըստ ուսումնական մասին, ուստի ամենայն տեղ հոգաբարձուք դպրոցաց սաստիկ պիտի գդուշանան եւ պիտի խորշին իսկ տարեկան ուսումնական ընթացքը չաւարտուած որ եւ է փոփոխութիւն ընել առանձին տեսչաց կամ վարժապետաց մէջ յանմնէ՝ առանց զիտութեան Թեմական տեսչաց կամ որ եւ է ստիպողական հարկի:

Այս տեսակ ցուցակներէն Հոգեւոր Խշանութիւնը բայց բաւականին տեղիկանալով իւրաքանչյւր առարկայից արդիւնաւոր կամ ապարդին դասատուութեանը, ի հարկէ չապաղիր յիւրմէ պարտեւպատշաճ տընօրէնութիւնը ընել յիւրումն ժամանակի տեսչաց կամ